Ջ. ՀԱՐԲՈՐԴԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏԸ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

1919 թ. Փարիզի կոնֆերանսի մի շարք նիստերում Անտանտի տերությունները և ԱՄՆ-ը, քննարկելով գրավված տերիտորիաների և գաղութային լծից ազատագրված երկրների հարցերը, եկան այն եզրակացության, որ նոր կազմավորվող պետությունները, առանց որևէ հզոր պետության «աջակցության» ի վիճակի չեն լուծելու իրենց արտաքին ու ներքին պրոբլեմները։ Ըստ այնմ էլ անհրաժեշտ համարվեց խնդրո առարկա երկրների վրա հաստատել «մանդատներ»։ Այսպիսով, իմպերիալիստական տերություններին հնարավորություն էր տրվում, կիրառելով «մանդատային սիստեմը», իրականացնել աշխարհի վերաբաժանումը և պայմաններ ստեղծել «երկրագնդի բնակչության մեծամասնությունը շահագործելու համար»[1]։

Կոնֆերանսը անդրադարձավ նաև ապագա Հայաստանի մանդատի խնդրին, որը առաջարկվեց ԱՄՆ-ին[2]։ Այնուհետև կոնֆերանսի ամերիկյան պատվիրակությունը լայն գործունեություն ծավալեց Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի մասին տեղեկություններ հավաքելու համար՝ օգտագործելով ոչ միայն պետական պաշտոնական հիմնարկությունների ներկայացուցիչներին, այլև ամերիկյան զանազան կազմակերպությունների գործակալներին[3]։ Այդ գործը ավելի ակտիվացավ, երբ կոնֆերանսի «Ջորսի խորհուրդը» Անդրկովկասում ամերիկյան գերագույն կոմիսար նշանակեց գնդապետ Ուիլիամ Հասկելին[4]։ Միաժամանակ, այդ նպատակով ԱՄՆ-ը «Ջորսի խորհրդի» գիտությամբ Թուրքիա և Անդրկովկաս գործուղեց գեներալ-մայոր Ջեյմս Հարբորդի զինվորական առաքելությունը՝[5] պարզելու Հայաստանի շահավետությունը ամերիկյան կապիտալի համար։ Առաքելության նպատակներից էր նաև ուսումնասիրել Օսմանյան կայսրության վիճելի շրջանների հետ կապված այն հարցերը, որոնք Քինգ-Քրեյնի հանձնաժողովը չէր հետազոտել[6]։

Հարկ է նշել, որ Ջ. Հարբորդի զինվորական առաքելության գործունեության առանձին հարցերի անդրադարձել են ինչպես ժամանակի մամուլը,

---

1 Վ. Ի. Լենին, Նկ, հ. 30, էջ 186։

2 Ամերիկյան պատվիրակության աշխատակիցներից Դ. Հ. Միլլերը իր հուշերում գրում է, որ մինչև կոնֆերանսի բացումը Հայաստանի մանդատը անգլիացիները առաջարկել էին ԱՄՆ-ին (D. H. Miller, My Diary at the Peace Conference (with Documents), v. 1, New York, 1925, p. 77)։

3 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 57, ց. 5, գ. 207, թ. 1։

4 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 355, թ. 119։

5 Հայկական մամուլի կարծիքով Հարբորդի առաքելության կազմակերպումը թելադրել էր Կովկասում գտնվող անգլիական զինվորական ուժերի հրամանատարը (նույն տեղում, գ. 377, մ. 3, թ. 126)։

6 Դա միջդաշնակցային հանձնաժողովի ամերիկյան մասնաճյուղն էր, որը Փարիզի կոնֆերանսի հանձնարարությամբ 1919 թ. մայիս-օգոստոս ամիսներին այցելեց Օսմանյան կայսրություն։ Հանձնաժողովը եղավ Մերձավոր արևելքում, Կիլիկիայում և Կ. Պոլսում։

այնպես էլ որոշ հեղինակներ[7]։ Սակայն առաքելության ամբողջական գործունեությունն առ այսօր հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել։

Ջ. Հարբորդի առաքելության մասին լուրը մեծ ոգևորություն առաջացրեց ոչ միայն Փարիզի կոնֆերանսի հայկական պատվիրակությունում[8], այլև ԱՄՆ-ի այն գործարար շրջաններում, որոնք ցանկանում էին հաստատվել ասիական մայրցամաքում։ Այդպիսի ոգևորություն էր հանդես բերում մասնավորապես Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն[9]։

Միաժամանակ անգլո-ֆրանսիական մամուլի օրգանները Ջ. Հարբորդի առաքելության գործունեությունը շաղկապում էին միմիայն Հայաստանի մանդատի հետ և արտահայտում իրենց երկրների քաղաքական շրջանների ձգտումները՝ ամերիկյան մանդատը հաստատել միայն Հայաստանի վրա, թույլ չտալ ամերիկյան ազդեցության ոլորտը ընդարձակել ու տարածել նաև ամբողջ Թուրքիայի վրա[10]։ Հարբորդի առաքելության հետագա գործունեությունը բացահայտում է ամերիկյան քաղաքական շրջանների հեռուն գնացող նպատակները, այսինքն՝ տեղեկություններ հավաքել Անատոլիայի, Հայաստանի և Անդրկովկասի մասին ու հնարավորության դեպքում ստանալ նաև այդ շրջանների մանդատը։

Առաքելության մասին որոշակի հայտարարություններ է անում Ջ. Հարբորդը «Նյու-Յորք Հերալդ» թերթի թղթակցի հետ կայացած հարցազրույցի ժամանակ։ Նա իր հերթին մասսայականացնում է այն իշխող կարծիքը, որ առաքելության նպատակն է պարզել հայկական մանդատի օգտավետությունը[11]։ Ջ. Հարբորդը փորձում էր գաղտնիության շղարշով պատել ամերիկյան քաղաքական շրջանների նկրտումները, այն է՝ հայերի վրա մանդատ հաստատելով՝ ԱՄՆ-ը պետք է իր հովանավորությունը տարածեր ոչ միայն բուն Հայաստանում, այլև Ռուսաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Թուրքիայում ապրող հայերի վրա[12]։

---

7 Ա. Նասյան, «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, էջ 186, Նույնի՝ Հայաստանի միջազգային իրավական դրությունը, 1920—1922, Երևան, 1967, էջ 96, Գ. Ա. Գալոյան, Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 268—269, Б. А. Борян, Армения, международная дипломатия и СССР, ч. 11, М.—Л., 1929, с. 66; Г. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900—1922, Ереван, 1969, с. 288—295; В. И. Шпилькова, Империалистическая политика США в отношении Турции (1914—1920 гг.), М., 1960, с. 100—102; Richard G. Hovannisian, The Republic of Armenia. The First Year, 1918—1919, v. 1, Berkeley—Los Angeles—London, 1971, p, 338, և ուրիշներ։

8 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 364, թ. 18։

9 Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն կազմվել է 1919 թ. հունվարին։ Կոմիտեին անդամակցում էին 22 նահանգապետներ, 3 նախկին նահանգապետներ, 7 ռեկտորներ, 10 եպիսկոպոսներ, 1 կարդինալ, 6 նախկին մինիստրներ և ուրիշներ։ Կոմիտեի նախագահն էր Դերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջ. Ջերարդը։ Կոմիտեն ամերիկյան քաղաքական գործիչներին և պրեզիդենտին կոչ էր անում արագացնել Հայկական հարցի լուծումը հօգուտ ԱՄՆ-ի շահերի։ Կոմիտեն շնորհավորական հեռագիր է հղում Ջ. Հարբորդին, հույս հայտնելով, որ «հանձնաժողովը շուտով կլուծի Հայկական հարցը և այդ նահատակ ժողովուրդի ձգտումները կիրագործվեն» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 8—9, ֆ. 200, ց. 1, 35, թ. 203—204, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 560, „Ararat", v. VI, London, 1919 p. 274—275)։

10 "The Manchester Guardian", 16. VIII. 1919; "The Times", 14. VIII. 1919; "Journal dès Débats", 11. VIII. 1919; "Westminster Gazette", 19. VIII. 1919.

11 "The New York Herald", 14. VIII, 1919; "Le Temps", 15. VIII. 1919; ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 377, մ. 3, թ. 126։

12 В. И. Шпилькова, Империалистическая политика США в отношении Турции (1914—1920 гг.), М., 1960, с. 66. Այդ մասին Փարիզի կոնֆերանսի հայկական պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին հայտնում է անգլիացի նշանավոր հրապարակախոս է. Մ. Դիլլոնը։ Ըստ նրա, ԱՄՆ-ը ցանկանում է իր մանդատի տակ վերցնել Կովկասից

1919 թ. օգոստոսի 14-ին Ջ. Հարբորդը այցելում է Փարիզի ամերիկյան պատվիրակության նախագահ Ֆրենք Փոլքին և նրանից ստանում վերջին հրահանգները[13] (ուսումնասիրել և զեկուցել Հայաստանի քաղաքական, զինվորական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ հարցերի մասին)[14]։ Մինչ Փարիզից դուրս գալը Ջ. Հարբորդը զբաղվում է առաքելության անվտանգ երթևեկության ապահովման հարցերով։ Նա շվեդական հյուպատոսարանի միջոցով Մ. Քեմալին խնդրում է շարունակել արևելյան Անատոլիայում առաքելության շրջագայությունը։ Ջ. Հարբորդի առաքելության հետագա գործունեությունը վկայում է, որ Մ. Քեմալը նրան ընդառաջել է։ Մ. Քեմալի այդ քայլը հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում։ Նա հույս էր փայփայում օգտագործել ԱՄՆ-ի միջոցները՝ Թուրքիայի քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։ Բացի այդ, ԱՄՆ-ում ուժեղանում էր Թուրքիայի վրա ամերիկյան մանդատի կողմնակիցների թիվը։ Այդ իսկ պատճառով Մ. Քեմալն աշխատում էր օգտագործել այդ քաղաքական ուժը՝ ճնշում գործադրելու եվրոպական երկրների, հատկապես Մեծ Բրիտանիայի վրա, որպեսզի վերջիններս ձեռնպահ մնան Թուրքիայի մասնատման քաղաքականությունից։ Եվ վերջապես Մ. Քեմալը կարծում էր, որ առաքելության միջոցով կթուլանա ԱՄՆ-ում պատերազմի տարիներին բորբոքված հակաթուրքական պրոպագանդայի թափը։ Մ. Քեմալին ամերիկյան գեներալի ուղղած այս խնդրագիրը թույլ է տալիս եզրակացնել, որ գեներալ Ջ. Հարբորդը տեղեկացված էր Անատոլիայում Մ. Քեմալի ազդեցության մասին, թեև նրա ուժի նկատմամբ արհամարհական վերաբերմունք էին ցուցաբերում Անտանտի երկրների քաղաքական և զինվորական մի շարք նշանավոր գործիչներ[15]։

1919 թ. օգոստոսի 15-ին Փարիզից Ջ. Հարբորդի առաքելությունը մեկնում է Կ. Պոլիս, որի մասին տեղեկացվում են Կ. Պոլսում գտնվող Անտանտի ներկայացուցիչները[16]։ Առաքելությունը բաղկացած էր 40 անդամներից[17]։ Նրա կազմում ընդգրկված էին բարձրաստիճան սպաներ, քաղաքագետներ, տնտեսագետներ, ինժեներներ և այլ մասնագետներ[18]։ Ժամանելով Կ. Պոլիս, Ջ. Հարբորդը հանդիպումներ է ունենում տեղի քաղաքական և ազգային տարբեր պատվիրակների, ինչպես նաև հայ պատվիրակների հետ։ Վերջիններս հույս էին տածում, որ Հարբորդի առաքելությունը կարագացնի Հայաստանի մանդատի հարցի լուծումը, իսկ Կ. Պոլսում հրատարակվող «Արագած» շաբա-

---

մինչև Կիլիկիա ընկած տարածությունները, նաև Կ. Պոլիսը իր նեղուցներով հանդերձ։ Եվ որպեսզի իր հայտնածը Ա. Ահարոնյանի մոտ կասկածներ չհարուցի, նա վերջացնում է իր միտքը հետևյալ կերպ. «Այս բոլորն ինձ հաղորդել է մի վստահելի բարձրաստիճան ամերիկացի» (Ա. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր), Բոսթոն, 1943, էջ 19)։

13 "Le Temps„, 15. VIII. 1919.

14 Major-General James G. Harbord, U. S. Army, Conditions in the Near East, Report of the American Military Mission to Armenia. Senate Documents· 66 the Congress, 2 nd Session, XV, No 264, 1920, p. 3 (այսուհետև՝ "Harbord'ś Report..„).

15 Այս վերաբերմունքի ձևավորման գործում քիչ դեր չեն խաղացել Փարիզի հույն և հայ պատվիրակները (տե՛ս Ա. Ահարոնյան, նշվ. աշխ., էջ 35, 36, 73)։

16 «Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», պրոֆեսոր Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 548—549 (այսուհետև՝ «Հայաստանը... փաստաթղթերում»)։ Ջ. Հարբորդի առաքելության շրջագայության մասին տեղեկացվում են նաև Հայաստանի դաշնակցական հանրապետության ներկայացուցիչները (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 97, թ. 118)։

17 «Արագած» շաբաթաթերթը գրում է, որ առաքելությունը բաղկացած էր 70 անդամներից, իսկ որոշ հեղինակներ նշում են 50 անդամ («Արագած», Կ. Պոլիս, 7. IX. 1919, Մ. Վ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 243)։

18 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, մ. 3, թ. 123, գ. 464, թ. 43, գ. 290, թ. 36, գ. 377, մ. 1, թ. 38, գ. 357, մ. 1, թ. 68—69։ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 2, էջ 36։

թաթերթի կարծիքով, եթե ԱՄՆ-ը ընդուներ Հայաստանի մանդատը, ապա Ջ. Հարբորդը լինելու էր Հայաստանի առաջին կառավարիչը[19]։

1919 թ. սեպտեմբերի 6-ին Ջ. Հարբորդի առաքելությունը Կ. Պոլսից մեկնում է Անատոլիա։ Առաքելությունն այցելում է Անատոլիայի և Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրեր[20]։ Սվազում Ջ. Հարբորդը հանդիպում է Մ. Քեմալի հետ[21]։ Վերջինս նրան հավաստիացնում է, որ ազգայնականները չեն ընդունում «թուրանիզմի» գաղափարները[22] և որ իրենց շարժումն ուղղված չէ Թուրքիայում բնակվող քրիստոնյաների դեմ[23]։ Սակայն, միաժամանակ, Մ. Քեմալը Ջ. Հարբորդին հայտնում է, որ Թուրքիայում պետք է կառավարեն միմիայն թուրքերը[24] և այդ հարցում նրանք ոչ մի զիջման կամ համաձայնության չեն գնա որևէ պետության հետ։ Թեպետ Մ. Քեմալը «արտահայտվում է հօգուտ ամերիկյան մանդատի»[25], բայց չի համաձայնվում ստեղծել Հայաստան Թուրքիայի տարածքում։ Ինչ վերաբերում է դաշնակցական հանրապետությանը, ապա Մ. Քեմալը այդ կառավարության անդամներին Ջ. Հարբորդի միջոցով հայտնում է, որ «այս վերջինը դաշնակցական կառավարությունը—Ա. Ս.) ձեռք քաշե Մեծ պետություններից և անմիջական համաձայնության գա թուրքերի հետ»[26]։ Հետագայում դաշնակցական հանրապետության վարչապետ Ա. Խատիսյանը, վերհիշելով Ջ. Հարբորդի հետ իր ունեցած զրույցները, գրում է, թե «Հարբորդը իր կողմեն խորհուրդ կուտար սկսել այդ բանակցությունները։ Մենք այդ խորհուրդին չհետևեցանք, հավատացած ըլլալով, որ մեր խնդիրը պետք է լուծվի Փարիզի մեջ»։ Այնուհետև Ա. Խատիսյանը փորձում է արդարացնել այդ քայլը, նշելով. «համենայն դեպս, եթե բանակցություններուն մեջ ալ մտնեինք, հավանորեն գործնական և ցանկալի արդյունքներ պիտի չստանայինք։ Մենք մեր ամբողջ հույսը դրած էինք Փարիզի (կոնֆերանսի—Ա. Ս.) վրա»[27]։

Հետաքրքրական է նաև գեներալ-մայոր Քյազիմ Կարաբեքիրի զեկուցագիրը Ջ. Հարբորդին, երբ նա այցելեց Էրզրում։ Նրանում պատերազմի տարիներին Անատոլիայի արևելյան վիլայեթներում տեղի ունեցած կոտորածների հրահրման գործում Քյազիմ Կարաբեքիրը մեղավոր է ճանաչում հայերին[28]։

1919 թ. սեպտեմբերի 27-ին հանձնաժողովը ժամանում է Կարս, որտեղ ծանոթանում է մարզի սոցիալ-քաղաքական և ռազմական իրավիճակին[29]։ Այնուհետև առաքելությունն ուղևորվում է Երևան[30]։ Մինչ այդ՝ «մամիս մի ա-

---

19 «Արարատ», 7.IX.1919։ Դեռ 1919 թ. հունիսի 27-ին ամերիկյան քաղաքական գործիչ Հ. Հուվերը դա առաջարկել էր Վ. Վիլսոնին («Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու»), Երևան, 1960, էջ 264)։

20 Առաքելությունը չմեկնեց Վանի և Բիթլիսի շրջանները, պատճառաբանելով, որ այնտեղ ճանապարհները անհարմար են ավտոմոբիլների երթևեկության համար, սակայն, այնուամենայնիվ, մի քանի ներկայացուցիչներ ուղարկեցին այդ շրջանները («Հայաստանը... փաստաթղթերում», էջ 571)։

21 Е. И. Шпилькова, նշվ. աշխ., էջ 95։

22 Tevfik Biyikliogu, Atatürk Anadoluda (1919—1921), Ankara, 1959, s. 30.

23 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 14. X. 1919։

24 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 583։

25 Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 247։

26 Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 343։

27 Ա. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 191, 192։

28 Karabekir Kāzim, Birinci Kafkas Kolordusunun 1334 senesindeki harekāti ve meshudati hakkinda general Harbord riyasetindeki Amerika heyetine takdim edilen rapor süreti, Erzurum, 1335 (1919).

29 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 175, թ. 96։

30 «Слово», 28.IX. 1919; 1. X. 1919.

ռաջ»[31], Անդրկովկաս էր եկել առաքելության ներկայացուցիչ կապիտան Բ. Մուրը։ Նա տեսակցել էր Թիֆլիսում գտնվող դաշնակցական կառավարության ներկայացուցիչ Լ. Եվանգուլովի հետ, նրանից պահանջելով տեղեկություններ հաղորդել Հայաստանի տնտեսության, ռազմական, քաղաքական, սոցիալական դրության վերաբերյալ։ Բացի այդ, Բ. Մուրը ցանկանում է ստանալ «մանրամասն տեղեկություններ մինիստրների մասին և պառլամենտի անդամների թիվը ու կուսակցական բաժանումը»[32], նույնիսկ հետաքրքրվում է նրանց «անցյալ հասարակական ծառայության մասին»[33]։ Ուշադրության արժանի է նաև Բ. Մուրի հետևյալ հարցը՝ ուղղված դաշնակցական կառավարությանը. եթե Ամն-ը ընդունի Հայաստանի մանդատը, ապա «արդյունաբերության և բանկերի հայ ներկայացուցիչները կկամենա՞ն իրենց գործունեությունը տեղափոխել Հայաստան...»[34]։ Այս հարցման նպատակը պարզ էր. նախ ճշտել հայ բուրժուազիայի դիրքը Հայաստանի և ամերիկյան մանդատի վերաբերյալ, ապա հնարավորին չափով հետագայում օգտագործել հայ բուրժուազիայի միջոցները՝ երկրի քայքայված տնտեսությունը ոտքի կանգնեցնելու գործում և դրանով իսկ թեթևացնել Ամն-ի մանդատային «հոգսը»։ Բացի այդ, հայկական կապիտալը, ներքաշվելով Հայաստանի տնտեսության ոլորտները, հետագայում պատասխանատու կլիներ ամերիկյան ծախսերի վճարման համար։ Բ. Մուրի հարցմանը դաշնակցական հանրապետության ներկայացուցիչները ծանոթացրել էին Կ. Պոլսի, Թիֆլիսի և Բաքվի հայ բուրժուազիայի վերնախավերին։ Ստեղծվում են հանձնաժողովներ՝ Բ. Մուրի հարցերին ամփոփ պատասխաններ տալու համար[35], որոնք հանձնվելու էին անձամբ Ջ. Հարբորդին։ Այս տվյալները մեկ անգամ ևս հաստատում են այն միտքը, որ Ամն-ը և ընդհանրապես մեծ տերությունները, Հայաստանը դիտել են որպես գաղութային երկիր։ Այնպես որ, ավելորդ էին Հայաստանի հանրապետության «քաղաքական» գործիչների շաղակրատանքները՝ թե Հայաստանը դաշնակիցներին իրավահավասար պետություն է եղել։

1919 թ. սեպտեմբերի 29-ին Ջ. Հարբորդի առաքելությունը ժամանում է Երևան[36]։ Նույն օրը երեկոյան և հաջորդ երեք օրերը հրավիրվում են կառավարական նիստեր, որտեղ առաքելության հետ միասին քննարկվում է Հայաստանի մանդատի հարցը։ Ջ. Հարբորդն աշխատում է ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները[37], ծանոթանում է կառավարության գործերին[38], և «յուրաքանչյուր նախարարի կենսագրության, անոր կրթական պատրաստության, մեկ խոսքով,—գրում է Ա. Խատիսյանը,—հետաքրքրվեցավ բոլոր մանրամասնություններով»[39]։ Ա. Խատիսյանի վկայությամբ, Ջ. Հարբորդն «արդեն այն ժամանակ այն համոզմունքին էր հանգած, որ եթե Ամերիկան պիտի ստանձնե մանդատը, պետք է ըլլայ ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ Փոքր Ասիոյ և Անդրկովկասի վրա, Ալեքսանդրեթեն սկսած մինչև Բաքու, այս-

---

31 Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 190։

32 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 357, մ. 2, թ. 104։

33 Նույն տեղում, թ. 105։

34 Նույն տեղում, գ. 364, թ. 52, «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը), նյութեր և փաստաթղթեր», Երևան, 1932, էջ 176։

35 «Սլովո» թերթը գրում է, որ այդ հանձնաժողովներն աշխատեցին երեք շաբաթ և նրա աշխատանքներին մասնակցում էին տարբեր մասնագիտությունների մոտ 50 մարդ («Слово», 5. X. 1919, Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 190)։

36 Ա. Խատիսյանը գրում է, որ Ջ. Հարբորդը Երևան է ժամանել սեպտեմբերի 25-ին, իրականում, ինչպես վերը նշել ենք, առաքելությունը Կարսում է եղել սեպտեմբերի 27-ին, իսկ սեպտեմբերի 28-ին, Իգդիրից Երևան մեկնելու ժամանակ, ճանապարհին ենթարկվել է թուրքերդական խմբերի հարձակմանը (Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 190, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 364, թ. 35—39, 40, 44)։

37 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 96, մ. II (2), թ. 95; "Слово", 5. X. 1919.

38 «Слово», 5. X. 1919.

39 Ա. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 191։

ինքն Միջերկրականեն մինչ Կասպից ծով։ Այդ եզրակացության էր հանգել հանձնախումբը, նկատի առնելով հաղորդակցության ճանապարհները, գլխավորապես ծովային և տնտեսական պայմանները»[40]։ Ջ. Հարբորդը միացյալ մանդատի գաղափարը հիմնավորում էր նրանով, որ անհրաժեշտ է մշտական կապ պահպանել Հայաստանի հետ։ «Այդ պատճառով... պետք է ամուր կերպով կանգնիլ Ալեքսանդրեթի մեջ և Տարտանելի փակման պարագային երկաթուղիով անցնիլ մինչև Կովկաս»։ Մյուս կողմից, նա մանդատի խնդիրը կապում էր վառելիքի, այսինքն՝ Բաքվի նավթի հետ։ «Անոնց (ամերիկացիներին—Ա. Ս.) կթվեր,—շարունակում է Ա. Խատիսյանը,—որ տնտեսական հայեցակետեն Փոքր Ասիան և Անդրկովկասը կներկայացնեն ամբողջություն մը, որ հօգատար մանդատների տեսակետեն անկարելի է բաժանել»[41]։ Հայաստանի կառավարությունը բավարարեց Ջ. Հարբորդի բոլոր հարցումները և պահանջները, հանձնելով նրան ոչ միայն կառավարության անդամների մանրամասն շարադրված կենսագրությունները[42], հանրապետության սոցիալ-քաղաքական, տնտեսական վիճակի մասին եղած տվյալները, այլև Հայաստանի կողմից հարևան պետությունների և դաշնակիցների հետ ունեցած գաղտնի բանակցությունների ու դաշնագրերի պատճենները[43]։ Ջ. Հարբորդին հանձնվեցին նաև Թիֆլիսի, Բաքվի և Կ. Պոլսի հայ բուրժուազիայի ներկայացուցիչների կողմից հրավիրված ժողովների որոշումները, որտեղ նշված էր, որ եթե ԱՄՆ-ը ընդունի Հայաստանի մանդատը, ապա իրենք «հաճույքով կվերադառնան հայրենիք»[44]։ Ավարտելով իր աշխատանքները Հայաստանում, Ջ. Հարբորդի առաքելությունը հոկտեմբերի 2-ին մեկնեց Թիֆլիս, այնուհետև Բաքու, ծանոթանալով Անդրկովկասի նորելուկ պետությունների քաղաքական և տնտեսական կացությանը։ Մոտավորապես հոկտեմբերի 6-ին Ջ. Հարբորդը ժամանում է Բաթում, որտեղից մեկնում է Փարիզ։

Արդեն դեպի Փարիզ վերադարձի ճանապարհին առաքելությունը պատրաստում է ընդհանուր զեկուցագիր[45]։ Ջ. Հարբորդը Փարիզ է ժամանում 1919 թ. հոկտեմբերի կեսին։ Նրան անմիջապես ընդունում է Փարիզի կոնֆերանսում ամերիկյան պատվիրակության նախագահ Ֆ. Փոլքը։ Ըստ «Le Temps»-ի հաղորդագրության, Ջ. Հարբորդը Ֆ. Փոլքին բանավոր զեկուցել էր առաքելության ուսումնասիրությունների մասին, իսկ գրավոր զեկուցագիրը ներկայացվելու էր Վ. Վիլսոնին։ Ինչպես գրում էր թերթը, Ջ. Հարբորդը մերժել էր իր զեկուցագրի մասին որևէ հաղորդում տալ, սակայն առաքելության անդամներից ստացված տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել, որ նա դեմ է եղել միայն Հայաստանի վրա ամերիկյան մանդատի հաստատմանը։ Եվ, ինչպես նշում է «Le Temps»-ը, գեներալը նվազ հակառակ կլիներ ամբողջ Թուրքիայի վրա ամերիկյան մանդատի ընդունելուն[46]։

Այնուհետև Ջ. Հարբորդը Փարիզից մեկնում է Վաշինգտոն։ Այստեղ նա զեկուցագիրը հանձնում է Վ. Վիլսոնին և հաշվետվություն տալիս սենատին։ Միաժամանակ Ջ. Հարբորդը մի շարք հարցազրույցներ է ունենում ամերիկյան մամուլի ներկայացուցիչների հետ, շարունակելով պաշտպանել իր տեսակետը, այն է՝ միացյալ մանդատ հաստատել ամբողջ Թուրքիայի և Անդրկովկասի վրա։ Նա նկարագրում է Հայաստանի «քաոսային դրությունը», որտեղ «փրկարար» աշխատանքներ է կատարում Ամերիկյան օգնության կոմիտեն։ Այս մտքերը նա շարադրում է նաև իր պատվին Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահ Ջ. Ջերարդի կազմակերպած ճաշկերույթում։ Ջ. Հարբորդը ճաշկերույթի մասնակիցներին փորձում է հա-

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում։

42 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 119, թ. 103, 104, 120, 126, 131, 143, 152։

43 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 364, թ. 73—74։

44 Նույն տեղում, թ. 42, 52—53, 58։

45 Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 344։

46 «Le Temps», 26. X. 1919.

մոգել, որ Թուրքահայաստանը չի կարող գոյություն ունենալ, որովհետև այնտեղ համարյա բացակայում է հայկական բնակչությունը, իսկ Ռուսահայաստանը չի կարող իր ինքնուրույնությունը պահպանել առանց Վրաստանի, քանզի ելք չունի դեպի ծով[47]։ Ջ. Հարբորդն իր այս եզրակացություններն ավելի ամբողջական շարադրել էր առաքելության ընդհանուր զեկուցագրում։ Այն բաղկացած էր չորս բաժնից և պարունակում էր ուսումնասիրված շրջանների քարտեզներն ու լուսանկարները[48]։ Ընդհանուր զեկուցագրի համար հիմք են ծառայել այն 11 զեկուցագրերը, որոնք շրջագայության ընթացքում կազմել էին առաքելության անդամները և ներկայացրել Ջ. Հարբորդին։ Այդ մասնագիտական զեկուցագրերն էին. 1. քաղաքական գործոնները և խնդիրները (կազմել է կապիտան Ս. Հորնբեքը), 2. Թուրքիայի և Անդրկովկասի կառավարությունը (լեյտենանտ-գնդապետ Ջ. Բրինթոն), 3. Թուրքիայի և Անդրկովկասի պետական ու մասնավոր ֆինանսները (պրոֆեսոր Ու. Քամբերլենդ), 4. առևտուրն ու արդյունաբերությունը Թուրքիայում և Անդրկովկասում (Է. Մեյրս), 5. հանրային առողջությունը և առողջապահությունը (գնդապետ Հ. Բիուքս), 6. Թուրքիայի և Անդրկովկասի ազգաբնակչությունը (լեյտենանտ-գնդապետ Ջ. Փ. Ջեքսոն), 7. կլիման, բնական հարստությունները, անասնաբուծությունը, երկրագործությունը Թուրքիայում և Անդրկովկասում (լեյտենանտ-գնդապետ Է. Բոուդիչ), 8. աշխարհագրությունը, հանքերը և սահմանները (մայոր Լ. Մարթին), 9. մամուլը Թուրքիայում և Անդրկովկասում (մայոր Հ. Քլարկ), 10. մանդատատիրող ռազմական խնդիրները (բրիգադային գեներալ Ջ. Վան Հորն Մոսլեյ), 11. տրանսպորտը, հաղորդակցության ճանապարհները Փոքր Ասիայում և Անդրկովկասում (Ու. Փոլանդ), 12. կենսագրականները (Ջ. Հարբորդ)[49]։ Այս զեկուցագրերը կրկին վկայում են, որ առաքելությունը հետաքրքրվել է ոչ միայն Հայաստանով, այլև ամբողջ Թուրքիայով ու Անդրկովկասով։

Ջ. Հարբորդը առաքելության զեկուցագրում փորձում է անկանխակալ մեկնաբանել ուսումնասիրված շրջաններում տեղի ունեցած իրադարձությունները։ Այսպես, օրինակ, անդրադառնալով հայերի ցեղասպանությանը, նա նկատում է, որ հայերը նյութական, բարոյական և թվաքանակի մեծ կորուստներ են կրել եղեռնի ժամանակ։ Այնուամենայնիվ, Ջ. Հարբորդի կարծիքով, «ճշմարտությունը» այն է եղել, որ հայերը Արևմտյան Հայաստանում երբեք մեծամասնություն չեն կազմել[50]։ Հարբորդյան այս «ճշմարտությունը» ցույց է տալիս, որ նա սահմանափակ գիտելիքներ է ունեցել ուսումնասիրված շրջանների մասին և անիրազեկ է եղել տեղի պատմական իրադարձություններին։ Մյուս կողմից, ակնբախ է, որ նրա վրա որոշակի ազդեցություն են գործել Թուրքերը։ Այնուամենայնիվ զեկուցագիրը անուղղակիորեն հաստատում էր հայերի կոտորածները[51]։ Զեկուցագրում այն կարծիքն էր հայտնվում, որ պատերազմի տարիներին հայկական շրջանները մեծ վնասներ են կրել և ի վիճակի չեն լինի մոտակա ժամանակում ոտքի կանգնել։ Այս կարծիքը հիմնավորելու համար Ջ. Հարբորդը զեկուցագրում ջանասիրաբար նկարագրում է հայության, առանձնապես հայ գաղթականների, ծանր վիճակը, չմոռանալով գովերգել ամերիկյան «բարեգործականներին»՝ նրանց համարելով հայ գաղթականության փրկիչներ։ Սակայն Ջ. Հարբորդը զարգացնում է այն միտքը ևս, որ Թուրքերը ոչ բոլոր դեպքերում են մեղավոր եղել այս ծանր իրադրության ստեղծման գործում։ Նա, Թուրքերին հարմարվելու միտումով, փորձում է Ա-

---

47 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 473, մ. 2, թ. 95, «Աշխատավոր», 15. I. 1920։

48 „The Department of State, Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919„ (այսուհետև՝ F. R. U. S.), v. II, Washington, 1934, p. 841—874; Գ. Գալոյան՝ նշվ. աշխ., էջ 288—295։

49 Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 344։

50 „Harbord's Report", p. 8, 10.

51 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 573։

ռամտյան Հայաստանում կատարված ավերածությունները մեծամասամբ վերագրել ռուսական կանոնավոր զորքերին և հայ կամավորական գնդերին[52]։ Սակայն հանրահայտ է, որ մինչև ռուսական զորքերի և հայ կամավորների մուտքը Արևմտահայաստան, թուրքերն արդեն ավերել էին երկիրը, կոտորել և տեղահանել խաղաղ հայ բնակչությանը։

Ջեկուցագրում նշվում է, որ իբր թուրքերն ավելի բարվոք պայմաններ են ստեղծել իրենց ենթակա շրջաններում, քան Անդրկովկասյան երեք հանրապետությունները, քանզի նրանք «բոլորն էլ գոյություն ունեն Ռուսաստանի կործանումից փրկված ունեցվածքի հաշվին»[53]։

Հարբորդը լիովին անտեսում էր Անդրկովկասում անկարգություններ ծընող մեղավորներից մեկին՝ Թուրքիային, այն որ երիտթուրքական, և ոչ միայն երիտթուրքական մեծաթիվ գործակալները Անդրկովկասի մահմեդականներին հրահրում էին քրիստոնյաների, հատկապես հայերի դեմ, շարունակելով իրենց հայասպան քաղաքականության կենսագործումը Անդրկովկասում։ Բացի այդ, հայ-թուրքական սահմաններն իրենց հարձակումներով մշտապես խախտում էին թուրք և քուրդ զինված հրոսակախմբերը։ Ջ. Հարբորդն իր զեկուցագրում մերժում է նաև այս իրողությունը, հավաստիացնելով, թե իբր թուրքական զորքեր չկան Հայաստանին սահմանամերձ շրջաններում և որ թուրքերն «իրագործում են զինադադարի պայմանները, ...բանակը զորացրված է հիմնովին» և որ Թուրքիան նպատակ չունի «անցնել սահմանը և կոտորել հայերին...»։ «Ես համոզված եմ,—գրում էր նա,—որ Թուրքիան ո՛չ հակում և ո՛չ էլ կարողություն ունի նման նպատակ հետապընդել (հայերի կոտորած—Ա. Ս.) և որ ներկա պաշտոնյաները (հավանական է նկատի ունի ազգայնականներին—Ա. Ս.) ըմբռնում են նախորդ կառավարության քաղաքականության ճակատագրական արատը»[54]։ Ջ. Հարբորդի այս եզրակացությունները ժամանակին հերքել է նույնիսկ Կ. Պոլսի բրիտանական կոմիսար, ադմիրալ դը Ռոբեկը, ըստ որի «գեներալ Հարբորդը... հավաքել է լրիվ սխալ կարծիք Անատոլիայի և Անդրկովկասի իրավիճակի մասին...»[55]։

Թուրքական «կարգուկանոնը» բարձր գնահատելիս և թուրքերի ոճրագործությունները անմեղսունակության դիմակով ծածկելիս Ջ. Հարբորդը ղեկավարվել է հակասովետական միտումով. նա գտնում էր, որ անդրկովկասյան երեք հանրապետությունները «արտացոլում են բոլշևիկյան ազդեցությունը»[56]։ Բնականաբար, ամերիկյան իմպերիալիզմի կատարածու Ջ. Հարբորդը «կարգուկանոն» պետք է տեսներ միայն այն երկրում, ուր իսպառ բացակայում էր բոլշևիզմի ազդեցությունը։

Ջ. Հարբորդը նախանշել էր այն պայմանները, որոնք նրա կարծիքով անհրաժեշտ էին Անդրկովկասի և Թուրքիայի վրա ամերիկյան միացյալ մանդատ հաստատելու համար։ Նախ՝ Անդրկովկասում ամենաանհուսալին նա համարում էր Հայաստանի դրությունը, որը «ոչինչ չուներ, որով կարողանար ուժերը լարել...», այն դեպքում, երբ Վրաստանը ելք ուներ ծով, իսկ Ադրբեջանը հայտնի էր նավթով[57]։ Սակայն ըստ Ջ. Հարբորդի, անդրկովկասյան հանրապետություններից և ոչ մեկն ի վիճակի չէ ոտքի կանգնել, եթե նրանց վրա չհաստատվի միասնական մանդատ, այն էլ ոչ միայն Անդրկովկասի,

---

52 „Harbord's Report...", p. 8—9.

53 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 573։

54 Մեջբերումը կատարում ենք Ջ. Հարբորդի զեկուցագրի վերաշարադրանքից, որն ուղարկել էր անգլիական դիվանագետ Ու. Հ. Բաքլերը է. Գ. Ֆորբս-Ադամսին («Հայաստանը... փաստաթղթերում», էջ 571—572)։

55 „Documents on British Foreign Policy, 1919—1939„, Edited by Woodword W. L. and Rohan Butler, v. IV, London, 1948, p. 844.

56 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 573։

57 „Harbord's Report...", p. 13.

այլև ամբողջ Անատոլիայի և Կ. Պոլսի վրա[58]։ Ջ. Հարբորդը գրում էր, որ միասնական մանդատի հարցում իրեն համակարծիք են եղել Թուրքերը և Կ. Պոլսի հայ պատվիրակները։ Նա փորձում է «հիմնավորել» միացյալ մանդատի անհրաժեշտությունը, թեկուզ հենց հայերի «փրկության» գործում։ Ջ. Հարբորդի կարծիքով, նախ՝ Թուրքիան չմասնատելով, ադիթ չեն տա հայերի նորանոր կոտորածներին, իսկ առանձնացնելով Հայաստանին, տեղի մահմեդական մեծամասնությանը կգրգռեն հայերի դեմ[59]։ Ջ. Հարբորդն առաջարկում էր Հայաստանը և Թուրքիան ենթարկել միայն վարչական բաժանման, այն էլ միացյալ մանդատի հսկողությամբ[60]։ Այսպիսով, հայերին «փրկելու» պատրվակը այն հարմար միջոցն էր, որը պետք է ժողովուրդների աչքում արդարացներ հսկայական տարածքների և ազգերի վրա ամերիկյան գաղութատիրության հաստատումը։ Ամերիկյան գերիշխանության հաստատումը նա փորձում է հիմնավորել նաև այլ տեսակետից։ Նրա կարծիքով, քայքայված, այլակրոն, «խայտաբղետ» և հակամարտ ազգերով ու ազգություններով բնակվող այդ շրջանների մանդատը եվրոպական և ոչ մի երկիր հնարավորություն չունի վերցնելու, քանի որ նրանք շատ են տուժել պատերազմի տարիներին։ Բացի այդ, եվրոպական մեծ տերություններն ունեն հակամարտ շահեր Օսմանյան կայսրությունում։ Ըստ Ջ. Հարբորդի, միայն ԱՄՆ-ը «բարձր» հեղինակություն ունի Օսմանյան կայսրության ժողովուրդների մոտ, քանի որ Միացյալ Նահանգները իբր թե ոչ մի «հետաքրքրություն» չունեն կայսրությունում և առավելություն չեն տալիս այնտեղ բնակվող ժողովուրդներից որևէ մեկին։ Դրա հետ միասին, ԱՄՆ-ը ունի հզոր տնտեսություն և ֆինանսական հարուստ միջոցներ, որոնք հնարավորություն կտան վերականգնելու մանդատային երկիրը։

Զեկուցագրում մանրամասնորեն նշվում է զորքերի այն թվաքանակը, որոնք պետք է օգնեն մանդատի ներքո գտնվող երկրի զորքերին և ոստիկանությանը՝ կարգուկանոն պահպանելու համար։ Ըստ Ջ. Հարբորդի հաշվարկների, անհրաժեշտ կլիներ 59.000 զինվոր, իսկ աննախադեպ իրադարձությունների ժամանակ նրանց թիվը կարելի էր հասցնել մինչև 200.000[61]։ Այդ բանակի պահպանման և ռազմական ծախսերի համար 5 տարում օգտագործվելու էր 757 մլն դոլլար, որը փոխհատուցվելու էր տեղական եկամուտների հաշվին[62]։ Ժամանակի մամուլը և քաղաքական գործիչները, նաև ներկայիս շատ ուսումնասիրողներ այն եզրակացությանն են հանգել, թե այդ բանակը պետք էր միայն Հայաստանին, քանզի Հարբորդի առաքելությունը ուսումնասիրում էր Հայաստանի շահավետությունը[63]։ Սակայն Ջ. Հարբորդը խոսում էր միացյալ մանդատի մասին, բնականաբար, զորքերի թվաքանակը լուծվելու էր նրկատի առնելով միացյալ մանդատի ներքո գտնվող շրջանները։ Այդ է ապացուցում Ջ. Հարբորդի առաջարկած մշտական բանակի ոչ մեծաթիվ լինելը, երբ Անտանտի քաղաքական շատ գործիչներ Հայաստանի ապահովության համար նույնիսկ 150.000 բանակն էին քիչ համարում[64]։ Ջ. Հարբորդն իր զեկուցագրում որոշակիորեն հիմնավորում էր փոքրաթիվ զորքերի անհրաժեշտությունը։ Նրա կարծիքով տեղի բնակիչները բարյացակամ են տրամադրված դեպի ԱՄՆ-ը, նույնիսկ «քեմալիստները հանդես չեն գալիս ամբողջ Թուրքիայի վրա ամերիկյան մանդատի դեմ»[65]։

---

58 F. R. U. S., 1919, v. II, p. 861.

59 Նույն տեղում, էջ 857։

60 „Harbord's Report...„ p. 16—19.

61 F. R. U. S., 1920, v. III, Washington, 1936, p. 784; «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 51, Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 293—294։

62 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 611։

63 Նույն տեղում, էջ 611, „The New York Times„, 27. V. 1920.

64 Ա. Ահարոնյան, նշվ. աշխ., էջ 31։

65 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 193, թ. 356։

Առաքելությունը խուսափում է որոշակի պատասխան տալ ԱՄՆ-ի կողմից մանդատի ընդունման հարցին։ Ինչպես նշվեց, ընդհանուր զեկուցագրի վաղմման համար գեներալ Ջ. Հարբորդն առաքելության անդամներին հանձնարարել էր մասնագիտական զեկուցագրեր ներկայացնել, միաժամանակ նշելով իրենց կարծիքը մանդատի ընդունման վերաբերյալ։ Զեկուցագրից դարզորոշ երևում է, որ այդ հարցում առաքելության անդամները միաձնական եզրահանգման չէին եկել։ Առաքելության մի շարք անդամներ որոշ հույսեր էին կապել մանդատի հետ, որն ըստ նրանց լայն հնարավորություններ կստեղծեր ԱՄՆ-ի կապիտալի համար։ Սակայն առաքելության անդամների մյուս մասը կասկածամտորեն էր վերաբերվում մանդատի հաջողությանը կամ էլ ընդհանրապես մերժում է այն, պատճառաբանելով, որ այն հակասում է Մոնրոյի դոկտրինային և, ամենակարևորը, եվրոպացիները հանգիստ չեն տա ԱՄՆ-ին։ «Զեկուցագիրը,—ինչպես գրում էր Վաշինգտոնի անգլիական դեսպան Լինդսեյը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնին,—ձեռնպահ է մնում որևէ հատուկ հանձնարարությունից՝ Ամերիկան պետք է ընդունի մանդատը, թե՝ ոչ։ Այս ընթացքի վերաբերյալ թեր և դեմ կարծիքներ են դրված։ Ընդունվում է, որ Մեծ Բրիտանիան առնվազն հավասարապես կարող է վարել մանդատը, բայց հայտարարում են, որ բրիտանական մանդատն այնքան էլ ընդունելի չի լինի հայերի համար այն մըշտական հավանականության առումով, որ բրիտանական քաղաքականությունը կուլ է գնում մուսուլմանական շահերին»[66]։ Ջ. Հարբորդն իր զեկուցագիրն ավարտում է ճապաղ կոչով, որ ԱՄՆ-ը չի կարող անտարբեր մնալ մանդատի նկատմամբ, քանզի միլիոնավոր մարդիկ կեզրակացնեն, թե ԱՄՆ-ը չի կատարում իր առաքելությունը մարդկության հանդեպ, «որի համար պատերազմի մեջ մտանք և որ խաբել ենք նրանց հույսերը»[67]։

Այսպիսով, Ջ. Հարբորդի զինվորական առաքելությունը ոչ մի էական դեր չկատարեց Հայկական հարցի լուծման խնդրում. դեռ ավելին, այն բորբոքեց ԱՄՆ-ի քաղաքական շրջանների կրքերը[68]։ Վիճաբանությունները հասարակական, բարեգործական ընկերություններից և մամուլի էջերից տեղափոխվեցին սենատ։ 1920 թ. մայիսի 24-ին ԱՄՆ-ի պրեզիդենտը դիմում է սենատին՝ Հայաստանի մանդատը ստանձնելու և այնտեղ զորքեր ուղարկելու համար։ Սակայն 1920 թ. մայիսի 29-ին սենատի արտաքին գործերի հանձնաժողովը 11 ձայնով ընդդեմ 3-ի մերժեց Հայաստանի մանդատը[69], իսկ 1920 թ. հունիսի 1-ին սենատը այն վերջնականապես մերժեց[70]։ Դա իր հիմքում ուներ լուրջ դրդապատճառներ։ Նախ, անգլո-ֆրանսիական իմպերիալիզմը թույլ չտվեց ԱՄՆ-ի մոնոպոլիաներին մոտենալու Միջագետքի նավթին և Մերձավոր արևելքին[71]։ Այնուհետև, Մեծ Բրիտանիան Ֆրանսիայի աջակցությամբ աշխատում էր ամերիկյան մանդատը սահմանափակել միայն «աղքատ» Հայաստանի սահմաններում, դարձնելով նրան «իր և Ռուսաստանի միջև... «բուֆեր»[72], պատնեշելով իր ասիական գաղութները հեղափոխական գաղափարներից։ Եվ, վերջապես, ԱՄՆ-ը մերժեց Հայաստանի մանդատը, քանի որ Անդրկովկասում հեղափոխական շարժումները մեծ թափ էին ստացել, որից և սարսափում էին ԱՄՆ-ի գործարար շրջանները։

---

66 «Հայաստանը... փաստաթղթերում», էջ 612։

67 „Harbord's Report...", p. 25—29.

68 "Le Temps„, 1. XI. 1919; „The Morning Post„, 8. IV. 1920.

69 „Борьба„, 25. VI. 1929; H. H. Howard, The Partition of Turkey: A Diplomatic history, 1913—1923, New York, 1966, p. 243.

70 «Слово», 6. VI. 1920.

71 Е. Г. Дэвенпорт и Сидней Р. Кук, Нефтяные тресты и англо-американские отношения, М., 1925, с. 51—52; *А. Ф. Миллер*, Дипломатическая подготовка Севрского договора («Проблемы востоковедения», 1960, № 5, с. 39—40).

72 «Աշխատավոր», 17.X.1919։

ВОЕННАЯ МИССИЯ Дж. ХАРБОРДА И МАНДАТ НАД АРМЕНИЕЙ

АРИСТАКЕС СОГОМОНЯН

Резюме

Получив согласие стран-участниц Парижской мирной конференции, США послали в Турцию и Закавказье военную миссию во главе с генерал-майором Дж. Харбордом. Перед ней была поставлена задача выяснить, представляют ли эти области интерес для американского капитализма. Миссия должна была также подготовить решение вопроса об американском мандате над Турцией и закавказскими республиками, в частности, над Арменией. Проведя исследование социально-экономической и политической ситуации в регионе, миссия сделала вывод о целесообразности установления мандата США над всем Закавказьем, Западной Арменией и Турцией. Однако эти планы находились в противоречии с целями империалистической политики Великобритании и Франции. Поэтому, естественно, что сенат США, который выражал интересы американского империализма, проголосовал против принятия Соединенными Штатами мандата только над Арменией, как это предложили Великобритания и Франция.